


Քոլեջի տնօրեն՝ Վ. Մինոյան

09.01.2018թ.



Հաստատված է

Քոլեջի կառավարման խորհրդի

09.01.2018թ. նիստում /արձանագրություն թիվ 41/

Խորհրդի նախագահ՝ Ա. Առաքելյան

**«ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ -Ի  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Քոլեջի նպատակն է ապահովել որակյալ կրթական միջավայր, որտեղ ուսանողը կկարողանա բացահայտել իր կրթական կարիքները, ստանալ մասնագիտական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ: Քոլեջում ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունն ուղղված է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրմանը, բացահայտմանը և դրանց հիման վրա կայացրած որոշումների կրթական գործունեության իրականացմանը:

**Նպատակները՝**

- ցուցաբերել լրացուցիչ աջակցություն ուսանողին ուսումնառության ամբողջ ընթացքում,
- աջակցել ուսանողներին ուսումնական գործընթացում,
- ուսումնասիրել և վերլուծել ուսանողների վերհանած կարիքները կրթական գործունեության բարելավման և կրթական համակարգի զարգացման համար,
- ուսանողների կողմից վերհանած կարիքներին տալ համապատասխան լուծումներ:

**Քոլեջի ուսանողներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարիքները Քոլեջի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ՝**

- ուսումնական գործընթացի (դասավանդման որակ, ուսումնառության միջավայր, միջոցների ապահովվածություն, լաբորատորիաների առկայություն և հազեցվածություն),
- այլ ծառայությունների և գործընթացների (կարիերայի զարգացում, սոցիալական աջակցություն, ուսման շարունակություն և այլն):

**Քոլեջում ուսանողների աջակցության ուղղություններն են՝**

- մասնագիտական աջակցություն,
- աջակցություն ուսումնառության ընթացքում,
- աջակցություն վարչական անձնակազմի կողմից,
- ուսումնառության ռեսուրսների ապահովում,
- կարիերայի զարգացմանն ուղղված աջակցություն:

**Քոլեջում ուսանողների կարիքների բացահայտման օղակ են հանդիսանում՝**

- ղեկավար անձնակազմը,
- դասախոսական անձնակազմը,
- ներքին որակի ապահովման ենթակառուցը,
- կարիերայի ստորաբաժանումը,
- ուսանողական խորհուրդը:

***Ուսումնական գործընթացի հետ կապված կարիքներն*** ուսանողը կարող է վերհանել նաև առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների (ամբիոնների) միջոցով, որի խնդիրն է աջակցել ուսանողին ուսումնառության ամբողջ ընթացքում, տանել մասնագիտության հետ կապված աշխատանքներ, ուսումնական տարում առաջացած հարցերի պարզաբանում և լուծումների որոնում:

***Ուսումնական գործընթացների հետ կապված*** ավելի ընդհանրական կարիքներն ուսանողները կարող են վերհանել ղեկավար անձնակազմի միջոցով:

***Ընդհանուր իրավունքների հետ կապված*** կարիքներն ուսանողը կարող է վերհանել ուսանողական խորհրդի միջոցով:

***Վարիերայի զարգացման և ուսման շարունակման հետ կապված*** կարիքներն ուսանողները կարող են վերհանել կարիերայի զարգացման ստորաբաժանման միջոցով: